«Լոյսի Նկարիչը» Ռուտոլֆ Խաչատրեան

—Ես կ'ուզեմ վերադառնալ լոյսի գաղափարին: Ձեր կենսագրութեան մէջ պատմութիւն մը կայ, որքան առասպել է, որքան ճիշդ, չեմ գիտեր: Ձեր փոքր տարիքին տեսիլք մը տեսած էք, լոյսի շողարձակումը եւ ձեր ամբողջ կեանքը այդ լոյսի փնտռտուքին նուիրուած է: Կ'ուզէիք անդրադառնա՞լ թէ ատիկա որքա՞ն իրական է:

—Դա իրական պատմութիւն է, բայց չէի ուզենայ դրա վրայ ծանրանալ, բայց եղել է այդ տեսիլքը, երեք անգամ, նոյն օրը, գիշերով, խաւարի մէջ: Տասներեք տարեկան էի այն ժամանակ եւ կը կարծեմ, որ այդ լոյսն է որ կը փնտռեմ ամէն մի գործի, նկարի մէջ: Նշանակութիւն չունի. մարդ է այն, բնանկար, թէ բնութեան տեսարան: Միշտ այդ լոյսը կ'ուզենամ տեսնել: Սա երեւի առաքելութիւն (mission) *է, որ տրուած է:*

—Լաւ, ես կ'ուզեմ ձեր դիմանկարներու մասին խօսիլ, անոնց մէջ կայ շատ կախարդական յատկանիշ որ թերեւս ես չկարենամ բնութագրել, բայց իմ զգացողութիւնս դիմանկարներու մասին այն է, որ արուեստի բոլոր պարունակներէն անդին, այդ դիմանկարներուն մէջ ես կը տեսնեմ ապրող մարդը: Դուք, որ դէմ յանդիման կու գաք այդ մարդուն եւ այդ մարդուն պատմութիւնը չէք գիտեր, ինչպէ՞ս կը կարողանաք այդ մարդուն ամբողջ կեանքը, պատմութիւնը, անցեալը ուրեմն «բռնել» պաստառի կամ լեւկասի վրայ եւ իր դիմանկարին մէջ ցոլացնել:

—Ընդհանրապէս մարդիկ սխալ են կարծում, թէ արուեստագէտը պէտք է չփուի, զրուցի մարդուն հետ երկա՛ր, որպէսզի ճանաչի մարդուն եւ՝ նկարի: Արուեստագէտ եթէ զգայ, թէ տուեալ մարդուն կրնայ նկարել, կը նկարի: Մենք ընդհանրապէս գիտում ենք կեանքը, բայց չենք տեսնում: Ես էլ չեմ գիտում, գիտեմ ինձ տալիս է առաջին քայլը՝ կ'ուզենա՞մ նկարել այդ մարդը: Նկարելու ժամանակ է սկսում ամէն ինչ, որովհետեւ մեծ կենտրոնացում կայ եւ այդ մեծ կենտրոնացումը ամէն մի միկրոաշխարհի մէջ թափանցելու հնարաւորութիւն է տալիս: Այն է, որ սովորական մարդիկս չենք նայում այդպէս կենտրոնացուած, մենք յարաբերութիւնների մէջ ենք, շփման մէջ ենք: Նկարչական այդ ժամանակամիջոցը, նկարելու միջոցը այդ մեծ կենտրոնացումը ամէն մի միկրոաշխարհի մէջ, ամէն մի մարդի մէջ: Տեսնել կարողանալ եւ սիրել: Ամենակարեւորը սէրն է, այդ սրտէն կը գայ իսկական նկարչութիւն: Այդպէս էլ եղել են մեծ վարպետները: Ոչ թէ անպայման հոգեբանութիւնը պէտք է նկարել: Հոգեբանութիւն համակցութիւնը ինքնըստինքեան գալիս է, ներթափանցութեամբ է գալիս: Այդ ժամանակն է կարեւորը, նկարչական այդ մթնոլորտը նկարչի եւ բնորդի միջեւ: Այդ է ամենակարեւորը, այդ է ամենախորհրդականը: Այդտեղ ստեղծւում է մի մեծ համագործակցութիւն, լուռ համագործակցութիւն: Շատ բան իհարկէ կախուած է տաղանդից, ամէն մի նկարիչ, եթէ իսկական նկարիչ է, այդ պահը պէտք է ապրի:

—Արուեստագէտներու կեանքին մէջ կարծէք իւրայատուկ բան մը կայ, իրենց կեանքի տեւողութեան, եւ իրենց տաղանդի հզօրութեան բուռն ընթացքի հետ յարաբերութիւն մը կայ: Կարծէք թէ, որքան հզօր տաղանդով ապրին եւ ստեղծագործեն, այնքան իրենց կեանքը կը կարճնայ: Այդ մասին որեւէ ենթադրութիւն ունի՞ք:

—Այսպէս է, գիտէ՞ք, պէտք է տա՛ս, նուիրես քեզ, չպիտի մտածես քո մասին, պիտի նուիրես: Այդ նուիրաբերման մէջ կամ կեանքդ կը պակսի կամ կը շարունակուի: Դա չափանիշ չէ: Ես կարծում եմ, որ արուեստագէտը ամէն մի նկարի առջեւ պէտք է գնայ խաչելութեան, որից յետոյ կը վերածնուի, իսկական խաչելութեան կը գնայ, ինչպէս գնաց Քրիստոսը եւ վերածնուեց, կենդանացաւ եւ համբարձուեց: Նոյնն էլ արուեստագէտի հետ պէտք է կատարուի: Ամէն մի նկարի առաջ նկարիչը պէտք չէ որ ափսոսայ, պէտք է իրեն տայ, մինչեւ վերջ տայ, որից յետոյ կը ստեղծուի նոր կեանք իրեն համար: Ինձ համար նկարչութիւնը այդպիսին է: Ով որ իրեն փայփայեց, չի հասնի սրան: Մեծ զոհաբերութիւն է արուեստը, ինքնազոհաբերութիւն:

—Լաւ, ըսենք Լէոնարտօ Տա Վինչին, Ռաֆայէլը, Մոցարտը իրենց գլուխգործոցները տուին: Եթէ աւելի հանգիստ կեանքով շարունակէին ապրիլ, այդ արուեստի բուռն մատուցումը, տալու արարողութիւնը կեանքին, պիտի ունենայի՞ն կը կարծէք:

—Դուցէ ունենայի՛ն: Կան արուեստագէտներ, որոնք շուտ են սպառւում, կան նաեւ, որ երկար են ապրում: Լէոնարդօ Տա Վինչին իր յիսունհինգ տարեկան հասակում վերջացրեց իր «Մոնա Լիզա Ջոգոնտան»՝ իր գլուխգործոցը: Ռաֆայէլը իր Սիքստինեան Մադոննան նկարեց երեսունմէկ-երեսուներկու տարեկան հասակում: Երկու հաւասարազօր հանճարների գործեր: Լէոնարդօն ապրեց մօտ վաթսունեօթ տարի, իսկ Ռաֆայէլը երեսունեօթ:

—Կ'ուզենք մեր զրոյցը շեղել նաեւ ամերիկեան արուեստի մասին: Դուք հիմա Ամերիկա էք եւ վստահաբար ամերիկեան արուեստին ծանօթութիւն ունիք: Ի՞նչ են յատկանիշները ամերիկեան արուեստին: Ի՞նչը կը սիրէք եւ ի՞նչը չէք սիրեր:

—Ես ամերիկեան արուեստին ծանօթ եմ տակաւին Երեւանից: Գիտէ՞ք ինչ, Ամերիկան երիտասարդ երկիր է դեռ, աւանդոյթներ չունեցող երկիր: Երբ կը նայեմ սկզբնական շրջանի ամերիկեան նկարչութեանը, այսպէս ասած ոչ թէ դասական է, այլ տասնութերորդ-տասնիններորդ դարի նկարչութիւն, լաւ թէ վատ այդպիսին է: Ժամանակակից արուեստը իհարկէ Ամերիկա ներխուժեց Եւրոպայից: Իմ կարծիքով ամերիկեան արուեստի մէջ ամէն ինչ կայ, բացի հոգեւոր արուեստից: Ոգու գաղափարը, ոգի՛ն չկայ: Բայց ոգին է, որ ստեղծում է որակը, դրա համար էլ որակն էլ այն չէ: Կարծես մանրագնին ամէն ինչ նկարուած է, բայց դա նկարուած չէ ոգու համար, այլ միայն աչքի համար է նկարուած: Բայց այլ է վերածննդի նկարիչների գործերը, ամէն ինչ նկարուած է մանրակրկիտ, բայց եւ կա՛յ ոգին, որն ինձ համար ընդունելի է: Պատահական չէ, որ ԱՄՆ-ում hyper realism *առաջացաւ: Սա աւելի ֆօթօ, լուսանկարչային արուեստ է, ֆօթօ մտածելակերպ: Նոյնիսկ վերցնում են լուսանկարը, մեծացնում եւ նկարում լուսանկարից: Սա իրական աշխարհին ձգտելու նշան է, լաւ է դա, բայց քիչ է, ոգին պակաս է: Դա գալիս է աւանդոյթների պակասից արուեստի մէջ, իսկ մենք ինչպէ՞ս կարող ենք անոգի լինել, երբ ունենք հնկայական դարերի պատմութիւն: Մեր անցեալի պատմութիւնն էլ ոգով է ստեղծուած, ոգու ուժով, յետոյ նոր գիտակցական չարադրանքն է եկել: Ոգին է եղել առաջնակարգը:*

—Հիմա դուք ձեր արուեստի փնտռտուքներու մէջ հասած էք հանգրուանի մը եւ այդ հանգրուանը ձեզի յիութիւն կու տայ, ո՞ւր կը ձգտիք երթալ:

—Շարունակել այն ինչ որ ստեղծել եմ, շարունակել առաւելապէս ոգին եւ որակը, աւելացնելու համար: Արուեստը փնտռել չէ, այլ, է՛լ աւելի տալ է, ընդունակ լինել սիրելու: Ինձ համար ամենամեծ արուեստագէտը նա է, ով բոլորից շատ կը սիրի: Ամենադժուար բանը սիրել է, իսկ որ նկարչութեամբ կարողանաս այդ սիրոյ մասին երգե՛լ...

Նայած ինչպիսի սիրով կը նկարես տեսածդ: Այդ է, որ հիացում կը ստեղծի եւ բոլորն էլ կը սկսեն սիրել կեանքը: Շատ կարեւոր դեր պէտք է խաղայ արուեստագէտը մեր դարում, քանի որ այս ծանր ժամանակաշրջանում կ'ապրենք: Դժուար, միջուկային շրջան: Պէտք է սիրել աշխարհը, պէտք է փրկել աշխարհը, իսկ ո՞վ է խօսում դրա մասին..., արուեստագէտը: Եթէ իմ նկարը նայողը կարողանայ սիրել կեանքը, աշխարհը, ուրեմն ես իմ նպատակիս հասած եմ: Նկարը դիտողը չի կարող է՛լ չար լինել: Մեր գործն է, որ օգնենք բարին յաղթանակի: Ինչպէ՞ս է գրուած Աւետարանում, խաւար կար ու Աստուծոյ կամքով խաւարի մէջ լոյս եղաւ եւ այդ լոյսն էր բարի: Ու խաւարը լոյսին չնուաճեց: Այդ լոյսը պէտք է լինի, լոյսն է ամենէն ուժեղը եւ լոյսն է, որ պէտք է յաղթանակի: Արուեստն էլ լոյս պէտք է լինի: Լոյսն է սէրն ու կեանքը:

Շատ շնորհակալ ենք եւ յաջողութիւն կը մաղթենք ձեր զոյգ ցուցահանդէսներուն Ամերիկայի մէջ, նաեւ ձեր արուեստի ասպարէզին:

(Հարցազրոյցը կատարած է Տիթրոյթի «Հայկական Մշակութային Ժառանգութեան Զայնասփիւռի վարիչ-տնօրէն Պրն. Էտ. Ազատեանը:)

(Տար. Նախորդ թիւէն եւ վերջ)

Առաջին Անգամ

Միացեալ Նահանգներու Մէջ

ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ

ՌՈՒՏՈԼՖ ԽԱՉԱՏՐԵԱՆ

(ՀՍՍՀ ժողովրդական նկարիչ)

Նոյեմբեր 12-16, 1985

HERITAGE GALLERY

718 North La Cienega Blvd., Los Angeles

Յաւելեալ մանրամասնութիւններու համար դիմել՝

EDITIONS EREBOUNI

(213) 465-6168

5825 Sunset Blvd., #203

Հայ թերթը անփոխարինելի ընկերն է հայ տան.

տարածեցէ՛ք

«Նոր Օր» եռօրեան